

Մաս և ամբողջ


Թվի մաս գտնելը



$\frac{1}{2}$	$\frac{1}{2}$
---------------	---------------

Եթե քառակուսին բաժանենք 2 հավասար մասի, ապա այդ մասերից յուրաքանչյուրը կլինի քառակուսու $\frac{1}{2}$ մասը:

$\frac{1}{2}$ -ը կարդում ենք մեկ երկրորդ:



$\frac{1}{2}$ մաս կամ կես:

$\frac{1}{2}$ -ը հասկանանք այսպես՝ ամբողջը բաժանել 2 հավասար մասի և վերցնել 1 մասը:


$\frac{1}{4}$	$\frac{1}{4}$
$\frac{1}{4}$	$\frac{1}{4}$

Եթե քառակուսին բաժանենք 4 հավասար մասի, ապա այդ մասերից յուրաքանչյուրը կլինի քառակուսու $\frac{1}{4}$ մասը:


$\frac{1}{4}$ -ը կարդացվում է մեկ չորրորդ:

$\frac{1}{4}$ մաս կամ մեկ քառորդ մաս:

$\frac{1}{4}$ -ը հասկանանք այսպես՝ ամբողջը բաժանել 4 հավասար մասերի և վերցնել 1 մասը:




$\frac{1}{16}$ ասելով հասկանում ենք ամբողջը բաժանել 16 հավասար մասերի և վերցնել 1 մասը:




Առաջադրանքներ

1. Պատկերներից յուրաքանչյուրի վրա նշված մասն արտահայտիր թվերով:


ա)




բ)




գ)



դ)



ե)



Թվի մաս գտնելը

Օրինակ՝ 36-ի $\frac{1}{6}$ -րդ մասը կլինի՝

$$36:6=6$$

2. Գտիր թվի նշված մասը:

$$160\text{-ի } \frac{1}{4}\text{-րդ մասը}$$

$$250\text{-ի } \frac{1}{5}\text{-րդ մասը}$$

$$3000\text{-ի } \frac{1}{10}\text{-րդ մասը}$$

$$180\text{-ի } \frac{1}{9}\text{-րդ մասը}$$

3. Հաշվիր:

$$245 \text{ կգ-ի } \frac{1}{5}\text{-րդ մասը}$$

$$24 \text{ ժ-ի } \frac{1}{4}\text{-րդ մասը}$$

$$210 \text{ դրամի } \frac{1}{7}\text{-րդ մասը}$$

4. Արտահայտիր նշված միավորներով:

$$\frac{1}{6} \text{ ժ} = \text{ր}$$

$$\frac{1}{5} \text{ կմ} = \text{մ}$$

$$\frac{1}{12} \text{ օր} = \text{ժ}$$

$$\frac{1}{4} \text{ տ} = \text{ամիս}$$

$$\frac{1}{10} \text{ ց} = \text{կգ}$$

$$\frac{1}{20} \text{ մ} = \text{սմ}$$

